ՎԵՐՋԻՆ ՇՆՉԻՆ

Վերջին ժամանակները ամբողջ Կովկասեան հայ ինտելիգենցիան ենթարկուում է խուզարկութիւնների և ձերբակալութիւնների և այս մասին հայ հասարակութիւններից անհրաժեշտ դիմումներ եղան Կովկասի կոմս Փոխարքային և Պետական Դումայի հայ անդամների միջոցով պատշաճ իշխանութեան, բայց այս դիմումը դեռ ոչ մի շօշափելի բարելաւում առաջ չի բերել։ Առանձին կերպով աչքի է ընկնում Հայկական երկու հաստատութիւնների ներկայացուցիչների ձերբակալութիւնը—այն է՝ Ներսիսեան դպրոցի տեսուչ Ա. Ահարոնեանի և Էջմիածնի ճեմարանի տեսուչ Մին. Բերբերեանի։

Այստեղ մեզ հետաքրքրող հարցը այն է, թէ ինչպէս վերաբերուեցին վարչական մարմինները այս երկու ձերբակալութիւնների և մենք այդ խնդրի վրայ մի փոքր կանգ կառնենք։

Ուսումնական տարին համարեա վերջանում էր, երբ ձերբակալուեց Ա. Ահարոնեանը և Ներս. Դպրոցի հոգաբարձութիւնը խոհեմութեամբ որոշեց սպասել դատի արդիւնքին և ապա իւր որոշումը տալ տեսչին պաշտօնում թողնելու կամ արձակելու վերաբերմամբ։ Դորանով էլ հարցը փակուեց։

Նոյնը մենք և ամբողջ հասարակութիւնը սպասում էր Էջմիածնի Ճեմարանի տեսուչ Մին. Բերբերեանի վերաբերմամբ։ Բայց այնտեղի կարճամիտ վարիչների ուղեղը այլ կերպ է խորհում, շնորհիւ իւր տեսակի մտածելակերպի։

Տեղական կեղտոտ ինտրիգների արդիւնքի լուրը ստանալով տ. Տեղապահը շտապեց հետևեալ իսկ օրը արձակել տեսուչ Մին. Բերբերեանին պաշտօնից. կարծէք թէ սպասում էր կառավարութեան այդ քայլին. մի յանցանքի համար երկու անգամ չեն դատում մարդկանց. իսկ Էջմիածնի դիպլոմատները պատրաստ են տասն անգամ պատժել. սա է նրանց մտածելակերպի ձևը։ Ճեմարանում ծագած մի քանի խնդիրները առաջ բերին մի կոնֆլիկտ, որի հետևանք էր ուսուցչական ամբողջ կազմի հրաժարականը բացի պ. Կանայեանից, որի վարմունքի վրայ ապշած ենք մնացել. այս ողջամիտ կարծեցեալ մարդը ստանձնեց մի պաշտօն, որին չէր մօտենայ ոչ մի իսկապէս ողջամիտ մարդ։

Աղաղակող ապօրինութիւններ են կատարուում այժմ Էջմիածնում. նախկին «անիշխանութիւնների» կատարեալ պատկերն է մեր առջևը բացուում. և այս բոլոր անիշխանական գործունեութիւնն ու ապօրինութիւնները կատարուում են այն ժամանակ, երբ՝ ազգի

Ընտրեալ Վեհը դիմում է արդէն Էջմիածին, երբ նա պատրաստուում է իւր հօտի ու հաստատութիւնների գլուխ անցնել. մենք այս բանը շեշտում ենք առանձին կերպով և սպասում ենք, որ նորին Սբ. Վեհ. Հայրապետը, հասնելով Էջմիածին, վերջ կդնի ամեն տեսակ ինքնակամութեան և ինտրիգի և իւր արդարագոյն դատաստանը կանէ թէ Ճեմարանի ուսուցչական խմբի և թէ նոյն Ճեմ. տեսուչ Մին. Բերբերեանի վերաբերմամբ. մի տեսչի, որը այժմ այնքան անհրաժեշտ է Ճեմարանին, բարձրացնելու նրա թէ բարոյական և թէ մտաւոր ոյժերը։

Սպասում ենք նաև որ Նա, քննելով անիշխանութեան շրջանի զեղծումները և ապօրինութիւնները, արդար և արժանի պատժի կենթարկի «за превышеніе власти» այդպիսի զեղծումներ անող բոլոր անձանց։ Սրան է սպասում հայ հասարակութիւնը իւր ընտրեալ Վեհից և համոզուած է, որ ազգի ու ազգային կրթութեան կարիքները խորը ըմբռնող Վեհ. Մատթէոս II-րդը յուսախաբ չի անի մի ազգ, որը այնպիսի բուռն ցանկութիւններով սպասում է նրա գալստեան։

ԼՈՒՐԵՐ

Էջմիածնի սինօդը, վեհ. Կաթողիկոսի հաստատութեան թուղթը ստանալով՝ չորս հրաւիրակ ուղարկեց Կ. Պոլիս Ն. Սրբութեան հրաւիրելու մայր Աթոռ և Նորան ուղեկցելու համար. Թիֆլիզի թեմական Տ. Գարեգին Արքեպիսկոպոսին, Արցախի թեմական Տ. Աշոտ եպիսկոպոսին և Մեսրովպ ու Բարգէն վարդապետներին, որոնք և ուղևորուեցան Կ. Պոլիս։

Վեհ. Հայրապետը ընդունելով հրաւիրակներին՝ այցելեց Թիւրքիայի նոր Սուլթանին իւր շնորհակալութիւնը յայտնելու և այնուհետև փոխադրուեցաւ մասնաւոր հիւրատուն։

Կ. Պոլսից մեկնելուց առաջ Նորին սրբութեան հաճելի էր հրաւիրել իւր մօտ Կ. Պոլսի նախկին պատրիարք Օրմանեան սրբազանին, որի հետ ունեցաւ մի երկար և սիրալիր տեսակցութիւն ազգային արդի վիճակի մասին, ինչպէս այդ մանրամասն նկարագրում է «Մշակի Կ. Պոլսի թղթակիցը։

Նորին Սրբութեան Կ. Պոլսից ուղեկցում են բացի Էջմիածնի հրաւիրակներից՝ Մեսրովպ և Գրիգորիս վարդապետներ և ազգային ժողովի նախագահ Մինաս Զերազը։

Կ. Պոլսից վեհը յաջող ճանապարհորդութիւնից յետոյ ժամանեց Օդեսա, ուր տեղական վարչական մարմինների, տեղական և շրջակայ հայ ազգաբնակութեան և Բեսարաբիայի Հայոց առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսի կողմից ընդունուեցաւ մեծ